ՀԱՍԿԵՐ
ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԳԻՐՔ
N 4 (2014-2015)
HASKER
A YEARBOOK OF CHILDREN'S LITERATURE AND FOLKLORE
N 4 (2014-2015)
АСКЕР
ЕЖЕГОДНИК ДЕТСКОЙ ЛИТЕРАТУРЫ И ФОЛЬКЛОРА
N 4 (2014-2015)

ԱՄՓՈՓԱԳՐԵՐ
ABSTRACTS
РЕЗЮМЕ

Հակոբ Չոլաքյան

ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ԴՊՐՈՑԻ ԴԵՐԸ ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԳՐԱԿԱՆ ԼԵԶՎԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԵՋ

ամփոփում

Սփյուռքի ձևավորման ժամանակներից ի վեր հայի ու հայկականության պահպանության գերակշիռ ծանրությունը ընկած էր դպրոցաշինության և լեզվի պահպանության վրա, որը դարձավ մի ամբողջ սերնդի փրկություն: Միջին Արևելքի հայկական գաղթօջախներում հայերենը դեռևս մայրենի էր, ի տարբերություն Ամերիկայի և Եվրոպայի գաղթօջախների, որտեղ մի քանի սերունդ հետո հայերենը ընկալվում էր որպես սովորելու լեզու: Նորանկախ արաբական պետությունների քաղաքականության շնորհիվ հայերենը գրեթե դուրս մղվեց հայկական դպրոցից: Այս բացը լրացնելու համար մամուլն ավելի մատչելի դարձվեց և զանազան խմբակներ բացվեցին հայերի համար: Սակայն ներկա աշխարհաքաղաքական պայմանները դարձյալ վտանգի առաջ են կանգնեցրել արևմտահայերենի գոյությունը, և այն դասվել է վտանգված լեզուների շարքին:

Բանալի բառեր՝ *արևմտահայերեն, սփյուռք, հայկականության պահպանություն, դպրոց, դպրոցաշինություն, վտանգված լեզու, աշխարհաքաղաքական իրավիճակ*

Акоб Чолакян

РОЛЬ АРМЯНСКОЙ ШКОЛЫ В ДИАСПОРЕ В РАЗВИТИИ ЗАПАДНО-АРМЯНСКОГО ЛИТЕРАТУРНОГО ЯЗЫКА

резюме

Со времен формирования армянской диаспоры создание армянских школ и сохранение западно-армянского языка стало самой важной задачей в вопросе выживания целого поколения. В Армянских общинах Ближнего Востока, западно-армянский считался родным языком, а в общинах Америки и Европы после нескольких поколений западно-армянский уже воспринимается как язык обучения. В арабских странах были изменены программы в армянских школах и западно-армянский подвергся большой опасности. Так, были приняты меры сделать прессу более доступной и создать различные обучающие кружки для армян. Однако сложившаяся нынешняя геополитическая ситуация ставит под вопрос бытование западно-армянского языка, который уже находится под угрозой исчезновения.

Ключевые слова: *западно-армянский язык, армянская диаспора, сохранение народа, школа, создание школ, исчезающий язык, геополитическая ситуация*

Hakob Cholakyan

THE ROLE OF DIASPORA SCHOOLS IN THE DEVELOPMENT OF THE WESTERN-ARMENIAN LITERARY LANGUAGE

summary

Since the formation of Armenian diaspora an urgent issue of protection of Armenia identity and language has been raised. The establishment of Armenian schools was of paramount importance as they took the responsibility of survival of the whole nation. In the majority of the Middle East communities Western-Armenian was considered a mother tongue, yet in America and Europe it started to yield positions. The policy of

Arabic countries restricted the hours of the Western-Armenian language at schools and consequently it was endangered. Nevertheless due to the efforts of the community the press was made more accessible, and educational unions were founded. However, within the current geopolitical situation the issue of protection of the Western-Armenian language is still essential and it is ranked among the world's endangered languages.

Key words: Western-Armenian language, Armenian diaspora, survival of the nation, school, establishment of schools, endangered language, geopolitical situation

Արմեն Սարգսյան

ԶԱՎԵՇՏԻ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՄԱՆԿԱԿԱՆ ԶՎԱՐՃԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ամփոփում

Մանկական զվարճախոսություններում անսպասելի ծիծաղը դրսևորվում է երեխաների անկեղծ խոսքի, իրերն ու երևույթները, մարդկային փոխհարաբերությունները նրանց հնարավորությունների սահմաններում գնահատելու, բառային կառույցները ուղիղ իմաստներով ընկալելու և ասելիքը յուրովի վերարտադրելու ձևերով: Երեխաների խոսքում զավեշտի դրսևորման ձևերը բազմազան են, ինչպես բազմազան ու յուրատեսակ են մանուկների մտածողությունն ու հետաքրքրությունների շրջանակները:

Բանալի բառեր՝ *մանկական զվարճախոսություն, մանկական բանահյուսություն, երեխաների խոսք, զավեշտի դրսևորում, մանկական մտածողություն*

Армен Саркисян

СПОСОБЫ ВЫРАЖЕНИЯ КОМИЧЕСКОГО В ДЕТСКОЙ РЕЧИ

резюме

Внезапный смех в детской речи проявляется, главным образом, искренней речью младенцев, особым восприятием и оценкой окружающего мира и человеческих отношений, посредством прямого понимания значений лексических конструкций, а также способностью детей по-особому воспринимать и воспроизводить речь. Формы выражения юмора в детской речи разнообразны, подобно тому, как разнообразны и уникальны тип мышления и круг интересов детей.

Ключевые слова: *детская речь, лепет, детский фольклор, юмор, детское мышление, особенности восприятия*

Armen Sargsyan

MEANS OF EXPRESSION OF HUMOR IN CHILDREN'S SPEECH

summary

Sudden laughter in children's speech is manifested with the help of sincere words, children's unusual assessment of people's relationship and the surrounding world in accordance with their own perception and abilities, direct understanding of the meaning of some lexical structures, as well their unique speech reproduction manner. The article deals with the means of expression of humour in children's speech, claiming that the means are as varied and distinctive as the scope of children's world picture and interests.

Key words: *children's speech, children's folklore, humor, reproduction manner, children's world picture*

Գոհար Հակոբյան

ԱՍԵԼՈՒԿԻ ԵՎ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԻՄԱՍՏԱՅԻՆ ՆԵՐԴԱՇՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՂՐԱՁՈՐ ԳՅՈՒՂԻ ՆՅՈՒԹԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ

ամփոփում

Ծնված օրվանից երեխայի խնամքը զուգակցվում է խոսքով, ինչն ըստ էության դառնում է երեխայի պասսիվ բառապաշարը: Երեխայի աշխարհընկալումը սկսվում է ձևավորվել այդ խոսքերով և խաղերով: Սրանց մեջ ներառված են կենսական և սոցիալական նշանակություն ունեցող մտքեր: Երեխաները, անկախ իրենց տարիքից, խաղերի ու ասելուկների միջոցով սովորում են ավանդական

մշակույթը: Հայ ժողովրդի տղայապաշտությունը ևս արտահայտվում է խաղիկների ու խաղերի մեջ: Զանազան մանկական հիվանդությունների բուժումը ուղեկցվում են որոշակի ասելուկներով ու արարողություններով: Սովորական կենցաղային խաղերը ևս ունեն իրենց ասելուկները, որոնք դեռևս պահպանվում ու կենցաղավարում են մեր օրերում:

Բանալի բառեր՝ *բանահյուսություն, խաղ, խաղիկ, բանասաց, երեխա, առած-ասացվածք*

Гоар Акобян

СЕМАНТИЧЕСКАЯ ГАРМОНИЯ СТИШКОВ И ОБРЯДОВ НА МАТЕРИАЛЕ ДЕРЕВНИ МЕГРАДЗОР

резюме

С первых дней жизни ребенок знакомится с окружающим миром посредством речи родных, что часто сопровождается стишками и народными обрядами, формируя, так называемую, пассивную лексику ребенка. Здесь накоплены традиции поколений, и они носят не только развлекательный, но и социальный характер. Посредством стишков ребенок получает различные сведения. В них выражены различные традиционные представления армянского народа, как например, поклонение ребенку-мальчику. Лечение различных детских болезней могут сопровождается обрядами и стишками. Народные стишки также являются частью обычных бытовых игр, которые передаются из поколения в поколение и бытуют по сей день.

Ключевые слова: *фольклор, игра, детские стишки, сказитель, ребенок, пословицы и поговорки*

Gohar Hakobyan

SEMANTIC HARMONY OF RHYMES AND RITES ON THE MATERIAL OF MEGHRADZOR VILLAGE

summary

From the first days of its life the child gets initial ideas on the surrounding world with the help of rhymes usually accompanied with various rites. To some extent these rhymes compile the passive vocabulary of the child. They definitely affect the child's frame of mind and worldview and carry vital social concepts. Unconsciously children learn traditions of their ancestors. Rhymes may also express traditional concepts such as a male child preference over female among Armenians, or the rite of cure of children's diseases accompanied with rhymes. Nevertheless common traditional games too encompass rhymes, which are kept and performed nowadays.

Key words: *folklore, game, rhyme, storyteller, child, proverb and saying*

Հասմիկ Մատիկյան

ՕՐՈՐՈՑԱՅԻՆԸ ՈՐՊԵՍ ՏԵՔՍՏ

ամփոփում

Օրորոցայինը՝ որպես մանկական բանահյուսության առանձին տեսակ, կենցաղավարում է մանկաշխարհում: Հոդվածում օրորոցայինը դիտարկվում է որպես տեքստ և կատարվում է անգլալեզու և հայ օրորոցային տեքստերի լեզվաբանագիտական քննություն: Հոդվածում կատարվում է նաև օրորոցային տեքստերի թեմատիկ դասակարգում: Փորձ է արվում քննության ենթարկել այնպիսի ոճահնարային առանձնահատկություններ, որոնք հատուկ են օրորոցային տեքստին: Դիտարկվում է նաև օրորոցային տեքստին մասնահատուկ ներազդողականությունը. մոր դերակատարումը նման է ակուստիկ՝ ձայնաբանական հայելու: Ձայնային ելևէջումներով մայրն ստեղծում է տրանսային միջավայր, որը, հոգեբանորեն ազդելով երեխայի ներաշխարհի վրա, նրան տեղափոխում է «քնի» գիրկը:

Բանալի բառեր՝ *ավանդական օրոր, տեքստ, մանկական բանահյուսություն, մանկաշխարհ, լեզվաբանագիտություն, ասացող, ունկնդիր*

Асмик Матикян

КОЛЫБЕЛЬНАЯ КАК ТЕКСТ

резюме

Колыбельная – как отдельный вид детского фольклора является частью детского быта. В статье колыбельная рассматривается как текст и проводится лингвофольклористическое исследование английских и армянских колыбельных песен. В работе делается попытка исследовать те стилистические особенности, которые характерны для колыбельных текстов. В статье рассматривается также аспект воздействия колыбельной на младенца. Посредством голосовых модуляций мать создает трансовую среду, которая воздействуя психологически, переносит малыша в мир сна.

Ключевые слова: *колыбельная, текст, детский фольклор, детская среда, лингвофольклористика, сказитель, слушатель*

Hasmik Matikyan

LULLABY AS A TEXT

summary

The lullaby, as a separate genre of children's folklore, resides in nursery. In the article the lullaby is viewed as a particular type of text and a linguo-folkloristic analysis of English and Armenian lullabies is carried out. A thematic classification of lullabies is also undertaken. An attempt is made to investigate stylistic devices peculiar to lullabies. The aspect of impact of lullabies is also taken into consideration. Due to voice modulations mother creates an atmosphere of trance, which affects the child psychologically soothing him into sleep.

Key words: *lullaby, text, children's folklore, nursery, linguofolkloristics, narrator, listener*

Արմեն Սարգսյան

ՀԱՅ ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

Ամփոփում

Եթե էպոսի, հեքիաթի, առակի, անեկդոտի, երգի և այլ ժանրի ստեղծագործությունների տարբերակների որակը կապված է ասացողի իմացական մակարդակից ու վերարտադրելու բնատուր շնորհքից, ապա մանկական բանահյուսական ստեղծագործություններում ու դրանց տարբերակներում առկա հայերեն անծանոթ բառերի և անըմկալելի օտարարալեզու բառ-բառակապակցությունների, երբեմն էլ ամբողջական կամ մասնակի անկապ կառույցների առատության փաստը գրեթե կապ չունի ասացողի բնատուր շնորհքի հետ: Այն պայմանավորված է վերարտադրող տարրի՝ երեխայի տարիքային առանձնահատկությամբ և լեզվական տարատեսակ արգելքները հաղթահարել չկարողանալու հանգամանքով:

Բանալի բառեր՝ *մանկական բանահյուսություն, մանուկ ունկնդիր, հաշվերգ, լեզվական արգելք, ասացող, լեզվարտահայտչամիջոցներ, մանուկների հոգեբանություն*

Саркисян Армен

АРМЯНСКИЙ ДЕТСКИЙ ФОЛЬКЛОР

резюме

Если во многих жанрах фольклора, как например, в эпосе, сказке, анекдоте или песне качество варианта фольклорного произведения связано с понятийным уровнем и врождённым даром повествователя, то в детских фольклорных произведениях вырисовывается совершенно иная картина. Здесь незнакомые слова на родном языке или непонятные иноязычные слова и словосочетания в их вариантах, а также факт изобилия целых или частичных несвязанных структур, практически, не имеют отношения с врождённым даром сказителя. Они скорее связаны с возрастными особенностями воспроизводящего субъекта – ребенка и с его трудностями преодоления различных языковых барьеров.

Ключевые слова: *детский фольклор, маленький слушатель, считалки, языковой барьер, рассказчик, средства выражения, детская психология*

Armen Sargsyan

ARMENIAN CHILDREN'S FOLKLORE

summary

Unlike many folklore genres such as epic poems, folktales, anecdotes or songs where the quality of variants depends on cognitive abilities and the talent of the storyteller, in children's folklore strange and unknown words in mother tongue, or foreign words and expressions, as well as incoherent syntactical structures and patterns are not in one way or another connected with the storyteller's talent. They are rather connected with age peculiarities of the reproducing agent – the child, along with his or her difficulties in overcoming various language barriers.

Key words: *children's folklore, child listener, rhyme, language barrier, storyteller, means of expression, children's psychology*

Ալվարդ Ջիվանյան

ՀՆՈՐՅԱ ՄԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ. Ֆ. Հ.ԲՐՆԵԹԻ «ՓՈՔՐԻԿ ԱՐՔԱՅԱԴՈՒՍՏՐԸ» ՎԻՊԱԿԸ

ամփոփում

Բրնեթի վիպակն այն երկերից է, որ դյութական հեռադիտակի պես կրճատում է անցյալի հեռավորությունն ու համառորեն հրավիրում կրկնակի ընթերցման արտակարգ գրավիչ սյուժեի և հեղինակի պատմողական բացառիկ ձիրքի շնորհիվ: Այն չունի իմաստային այնպիսի բազմաշերտ կառուցվածք, ինչպիսին Ա. Դե Սենտ-Էքզյուպերիի գրեթե համանուն վիպակը՝ «Փոքրիկ իշխանը», սակայն գոնե վերնագրային մակարդակում այս վեպերը քնքուշ զույգ են կազմում, և նրանց միջտեքստային մերձությունը շրջանցնելն անհնար է:

Բանալի բառեր՝ *միջտեքստային մերձություն, կրկնակի ընթերցում, գրավիչ սյուժե, պատմողական ձիրք, վերնագրային մակարդակ*

ИСТОРИЯ О БЫЛЫХ ВРЕМЕНАХ

РОМАН Ф.Х БЕРНЕТТ «МАЛЕНЬКАЯ ПРИНЦЕССА»

резюме

Роман Ф. Х. Бернетт «Маленькая принцесса» подобно волшебному телескопу сокращает расстояние между настоящим и далеким прошлым, настойчиво приглашая читателя на повторное чтение благодаря захватывающему сюжету и исключительному нарраторскому таланту автора. Произведение Бернетт не обладает многослойной семантической структурой почти одноименной повести А. де Сент-Экзюпери, однако на уровне заглавий их связь невозможно игнорировать, а их интертекстуальная близость неопровержима.

Ключевые слова: *интертекстуальная близость, повторное чтение, захватывающий сюжет, нарраторский талант, уровень заглавия*

Alvard Jivanyan

A STORY OF THE PAST TIMES:

A LITTLE PRINCESS BY F. H. BURNETT

summary

Burnett’s novel is a work, which like a magic telescope shrinks the distance between past and present and invites to a second reading owing to its captivating plot and the unique narrative talent of the author. It does not have the multi-layered semantic structure of the almost homonymous novel of A. de Saint-Exupery. However at least on title level they make a unique pair and their intertextual proximity cannot be denied.

Key words: *intertextual proximity, second reading, captivating plot, narrative talent, title level*

Գոհար Մելիքյան

ՀԱՅԿԱԿԱՆ «ՓՈՔՐԻԿ ՔՈՒՅՐ ԵՎ ԵՂԲԱՅՐ» ՀԵՔԻԱԹԱԽՄԲԻ ՎԱՐՔԱԳԾԱՅԻՆ ԸՆԹԵՐՑՈՒՄԸ

ամփոփում

Հոդվածի նպատակն է քննության ենթարկել հայկական «Փոքրիկ քույր և եղբայր» հեքիաթախմբի գլխավոր հերոսների՝ քրոջ և եղբոր վարքագծային առանձնահատկությունները: Հայկական ժողովրդական հեքիաթների համատեքստում հեքիաթախումբը կրում է «Գառնուկ եղբայր» անվանումը և ներկայացված է տասը տարբերակով: Ժողովրդական հեքիաթում երեխաները ունեն հատուկ գործառույթ և կարող են դառնալ զանազան մեկնությունների առարկա: Հայկական հեքիաթանյութում քրոջ և եղբոր հարաբերությունների հիմքում ընկած են քրոջ պաշտպանողական և վերահսկողական գործառույթները: Հեքիաթանյութի բոլոր տարբերակներն ունեն ընդհանուր սյուժե՝ զանազան տարբերակիչ փոփոխություններով, որոնց վերլուծությունը հնարավորություն է ընձեռում ավելի խորը մեկնաբանել շարքը:

Բանալի բառեր՝ *հեքիաթախումբ, քույր և եղբայր հարաբերություններ, անորոշ տարիք, խորհրդանիշ, միջանձնային վարքագիծ, որբեր, պաշտպանական և վերահսկողական գործառույթները, երկակիություն, բնազդային, հոգեբանական կողմ, փոխակերպում*

Гоар Меликян

ПОВЕДЕНЧЕСКОЕ ТОЛКОВАНИЕ АРМЯНСКИХ НАРОДНЫХ СКАЗОК ЦИКЛА «БРАТЕЦ И СЕСТРИЦА»

резюме

Фольклорная сказка часто адаптируется в зависимости от желаний или интересов слушателей и читателей. Дети в народной сказке имеют особую функцию, и их образ может стать предметом разнообразных исследований. Статья рассматривает поведенческие особенности маленьких детей в цикле армянских народных сказок «Братец и сестрица». Отношения между братом и сестрой в армянской традиции строятся на взаимном доверии, уважении, любви и высшей степени сплоченности. Сестра выступает защитником младшего брата, она старше, разумнее и имеет более зрелый психологический портрет. В армянском фольклоре цикл «Братец ягненок» представлен в десяти вариантах. Все версии имеют общий

стержневой сюжет с разнообразными модификациями, раскрывающими новые слои для интерпретации сказки.

Ключевые слова: *Цикл сказок, отношения между братом и сестрой, неопределенный возраст, символические представления, межличностное поведение, сироты, защитные и контрольные функции, двойственность, инстинктивное, психологический аспект, трансформация*

Gohar Melikyan

BEHAVIORISTIC READING OF ARMENIAN *LITTLE BROTHER AND LITTLE SISTER* FOLKTALE CYCLE

summary

The focus of this paper is behavioristic peculiarities of very young child protagonists in Armenian *Little Brother and Little Sister* tales. Different perspectives of Brother and sister relationship in Armenian *Brother Lamb* cycle are discussed here. The folktale genre is characterized as adjustable to the readers' or listeners' needs. Children in folktales have a particular function and may become a subject to various interpretations. The nature of brother and sister relationship in Armenian folktales rests on the sister's protective and supervisory functions over her younger brother. All versions share the common plot with various modifications, each helping to fully reveal the overall nature of the tale suggesting clues for new readings.

Key words: *folktale cycle, sister and brother relations, indefinite age, symbolic representations, interpersonal behavior, orphan siblings, protective and supervisory functions, duality, instinctive, psychological aspect, transformation*

Լուսինե Թովմասյան

ԿԱԽԱՐԴԱԿԱՆ ԲՆԱՇԽԱՐՀԸ ՄԻՋՏԵՔՍՏԱՅՆՈՒԹՅԱՆ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ

ամփոփում

Հոդվածում կատարված է Լ. Քերոլի և արցախյան հեքիաթների կախարդական բնաշխարհի միջտեքստային վերլուծություն: Այլաբերությունը և ոճական

հնարները (անձնավորում, փոխաբերություն, փոխակերպում, մակդիր, համեմատություն) բնաշխարհը օժտում են նոր անիրական կախարդական հատկություններով, որոնք հրաշապատում հեքիաթների տեքստում ձեռք են բերում նոր իմաստ և ճշմարտացիություն: Միջտեքստային վերլուծությունը բացահայտում է ընդհանուր իմաստային և ոճական առանձնահատկությունների առկայությունը երկու տարբեր ազգային մշակույթներում:

Բանալի բառեր՝ *միջտեքստային վերլուծություն, կախարդական բնաշխարհ, ոճական հնար, անձնավորում, փոխակերպում, մակդիր, համեմատություն, իմաստային առանձնահատկություններ, ոճական առանձնահատկություններ*

Лусине Товмасян

ВОЛШЕБНАЯ ФЛОРА В СВЕТЕ ИНТЕРТЕКСТУАЛЬНОСТИ

резюме

В статье представлен анализ волшебной флоры сказок Л. Кэрролла и арцахских сказок в свете интертекстуальности. Тропы и стилистические приемы (персонификация, метафора, метаморфоза, эпитет, сравнение) наделяют «сказочную флору» новыми нетипичными для данного класса свойствами, обретающими в тексте сказки семантическую логику и правомерность. Интертекстуальный анализ раскрывает наличие идентичных семантико-стилистических особенностей в двух различных национальных культурах.

Ключевые слова: *интертекстуальный анализ, волшебная флора, тропы, персонификация, метаморфоза, эпитет, сравнение, семантические особенности, стилистические особенности*

Lusine Tovmasyan

MAGIC FLORA IN THE LIGHT OF INTERTEXTUALITY

summary

The article provides an intertextual analysis of flora in both *Alice Tales* and Artsakh fairy tales. Tropes and stylistic devices (personification, metamorphosis, epithet, simile) describing the flora endow it with magic features that acquire new semantics and relevance in the fairy tale text. Intertextual analysis reveals the presence of comparable semantics and stylistic features in two distant cultures.

Key words: *intertextual analysis, magic flora, trope, personification, metamorphosis, epithet, simile, semantic features, stylistic features*

Իշխան Դադյան

ԳՐԱԿԱՆ ԵՐԱԶԸ ՄԱՆԿԱԿԱՆ ՀՐԱՇԱՊԱՏՈՒՄ ԵՐԿԵՐՈՒՄ

ամփոփում

Երազատեսությունը տարածված երևույթ է մանկագրության մեջ: Վառ օրինակներ են Չ. Դիքենսի «Սուրբ ծննդյան երգը», Լ. Քերոլի «Ալիսը հրաշքների աշխարհում», Ն. Գեյմանի «Քորալայնը» և այլ երկեր: Մանկական գրականության մեջ երազը և երազատեսությունը կարող են հանդես գալ տարբեր կերպ՝ որպես ժանր, դիպաշար, համատեքստ, ոճական հնար և անգամ՝ անձնավորված կերպար: Նյութի տեքստաբանական քննությունը պահանջում է որոշակի հստակեցում՝ երազը տեքստային տիրույթում դիտարկելու համար: Հեղինակները երազները «տեղավորում են» իրական միջավայր՝ դրանք ավելի հավանական դարձնելու համար: Առանց մեզ ծանոթ ամենօրյա գործողությունների հետ զուգորդման՝ ընթերցողի կողմից ընդունելի չէին լինի հեղինակների վառ ու անսովոր հորինվածքները:

Բանալի բառեր՝ *գրական երազ, անգիտակցական, երազատեսություն, երազ-տեքստ, այլաշխարհ, լեզվաոճական հնար, խորհրդանիշ*

Ишхан Дадян

ЛИТЕРАТУРНЫЙ СОН В ДЕТСКИХ ФАНТАСТИЧЕСКИХ ПРОИЗВЕДЕНИЯХ

резюме

Сновидение довольно распространенное явление в детской литературе. Ярким примером являются «Рождественская песнь» Ч. Диккенса, «Алиса в стране чудес» Л. Кэрролла, «Коралина» Н. Геймана и другие произведения. В детской литературе сон и сновидение могут иметь различные функции. Текстологический анализ материала требует внесения определенной ясности для рассмотрения сна как текста. Писатели «представляют» сон в реальной среде создавая реальные условия для ее интерпретации. Без проведения параллелей между знакомыми нам повседневными действиями (такими как, смена одежды перед сном, сон и пробуждение) и вымышленными, читатель с трудом бы принял столь яркие и необычные сочинения авторов.

Ключевые слова: *литературный сон, бессознательное, сновидение, возможный мир, сон-текст, лингвостилистический приём, символ*

Ishkhan Dadyan

DREAMS IN CHILDREN’S FANTASY LITERATURE

summary

Children’s literature contains myriad references to dreams. *A Christmas Carol* by Ch. Dickens, *Alice's Adventures in Wonderland* by L. Carrol, *Coraline* by N. Gaiman and many others stand as vivid examples of the aforesaid. In children’s literature dreams manifest themselves in various ways. The textual analysis of the material requires some sort of specification so as to study dreams within the scope of text studies. Writers “fit” dreams in a realistic setting in order to make them more plausible. In fact, without their association with familiar day-to-day experiences such as disrobing, nodding off, awakening scared, these vividly visual representations by the authors might not have been accepted by readers.

Key words: *literary dream, unconsciousness, dream, otherworld, dream-text, linguostylistic device, symbol*